ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/217

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.08.2020թ. թիվ 26/26-1/12901-2020 գրությամբ «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը Երևանի քաղաքապետարանի 24.08.2020թ. թիվ 01/61-15598 գրության հիման վրա 27.08.2020թ. թիվ 26/26-1/12901-2020 գրությամբ նախաձեռնել է «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/217 ընթացակարգի շրջանակներում 10.09.2020թ. ժամը 10:15-ին և 17.09.2020թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.08.2020թ. թիվ 26/26-1/12901-2020 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 19.11.2019 թվականին կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-19/118-1 ծածկագրով պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Դավիթ Բեկ փողոցի հարևանությամբ գտնվող նորաստեղծ թաղամասի բնակելի տների կոյուղագծերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրով նախատեսված 352000 ՀՀ դրամից Ընկերությանը կատարված աշխատանքների դիմաց օրենքով սահմանված կարգով վճարվել է 142000 ՀՀ դրամ:

Երևանի քաղաքապետարանը համապատասխան գրություններով դիմել է Ընկերությանը՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ

կատարելու անհրաժեշտության վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

Պատվիրատուն վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածով, 345-րդ հոդվածի 1-ին մասով և 466-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները:

Պայմանագրի հավելված 1-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին կետի համաձայն՝ հեղինակային հսկողությունն ընթանում է ամբողջ շինարարության ընթացքում՝ ապահովելով շինարարության իրականացման համապատասխանությունը հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերին, սակայն Ընկերությունը փաստացի չի կատարել վերը նշված պահանջը:

Պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունը, Երևանի քաղաքապետարանը միակողմանի մասնակի (210 000 ՀՀ դրամի չափով) հրաժարվել է Ընկերության հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթը:

Ամփոփելով Պատվիրատուն առաջարկել է, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով, Ընկերության նկատմամբ կիրառել նույն օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/217 ընթացակարգի շրջանակներում 10.09.2020թ. ժամը 10:15-ին և 17.09.2020թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2020/217 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/217 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 19.11.2019 թվականին կնքվել է N ԵՔ-ՄԱԾՁԲ-19/118-1 ծածկագրով պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Դավիթ Բեկ փողոցի հարևանությամբ գտնվող նորաստեղծ թաղամասի բնակելի տների կոյուղագծերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պատվիրատուի կողմից 21.08.2020թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է ԵՔ-ՄԱԾՁԲ-19/118-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.08.2020թ. թիվ 26/26-1/12901-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 27.08.2020թ. թիվ 26/26-1/12901-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը*** **կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,**

<u>աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. ***<u>խախտել է պայմանագրով նախատեսված</u>*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***<u>պարտավորությունը</u>***, ***<u>որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը</u>*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 19.11.2019 թվականին կնքվել է N ԵՔ-ՄԱԾՁԲ-19/118-1 ծածկագրով պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Դավիթ Բեկ փողոցի հարևանությամբ գտնվող նորաստեղծ թաղամասի բնակելի տների կոյուղագծերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1

հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ հեղինակային հսկողության ծառայության ժամկետ է սահմանվել՝ համապատասխան շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:

Հավելված 1-ի 1-ին կետի համաձայն՝ հեղինակային հսկողությունն ընթանում է ամբողջ շինարարության ընթացքում՝ ապահովելով շինարարության իրականացման համապատասխանությունը հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերին:

Համաձայն գործում առկա 27.12.2019թ. պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրության՝ Պայմանագրի շրջանակներում Ընկերությունը կատարել է 142000 ՀՀ դրամի աշխատանքներ:

Երևանի քաղաքապետարանն Ընկերությանն ուղղված 21.08.2020թ. թիվ 01/61-15510 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունը, այն է՝ Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին կետի համաձայն՝ հեղինակային հսկողությունն ընթանում է ամբողջ շինարարության ընթացքում՝ ապահովելով շինարարության իրականացման համապատասխանությունը հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերին, սակայն Ընկերությունը փաստացի չի կատարել վերը նշված պահանջը, հետևաբար Երևանի քաղաքապետարանը միակողմանի մասնակի (210 000 ՀՀ դրամի չափով) հրաժարվել է Ընկերության հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Պատվիրատուի կողմից 21.08.2020թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է ԵՔ-ՄԱԾՁԲ-19/118-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է</u>***

<u>պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն թական է համարվում, եթե՝***

ա) Մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

բ) ***<u>խախտվել է ծառայության մատուցման ժամկետը,</u>***

Այսպիսով՝ «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն իր և Երևանի քաղաքապետարանի միջև 19.11.2019թ. կնքված Պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով և ժամկետներում իրականացնելու տեխնիկական հսկողության աշխատանքներ, այն է՝ Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին կետի համաձայն՝ հեղինակային հսկողությունն ընթանում է ամբողջ շինարարության ընթացքում՝ ապահովելով շինարարության իրականացման համապատասխանությունը հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերին, մինչդեռ արձանագրում եմ, որ 27.12.2019թ. պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրության և գործում առկա փաստերի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված 352000 ՀՀ դրամի աշխատանքներից Ընկերությունը կատարել է 142000 ՀՀ դրամի աշխատանքներ՝ թույլ տալով Պայմանագրի էական խախտում, այն է՝ խախտվել է Պայմանագրի 2.1.3-րդ կետի բ) ենթակետով սահմանված պահանջը, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.08.2020թ. թիվ 26/26-1/12901-2020 գրությամբ «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**